ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-229-07.04.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք
«ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-250 օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «թ» կետով.

«թ) տրամադրում է ԱՏԱ Կառնետ (ժամանակավոր ներմուծման գրքույկ) հավաստագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: ԱՏԱ Կառնետ հավաստագրերը ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր են, որոնք օգտագործվում են ապրանքների ժամանակավոր ներմուծման համար՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. ԱՏԱ Կառնետ հավաստագրերի տրամադրման կարգը սահմանել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում
(Կ-229-07.04.2022-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-250 օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «թ» կետով.

«թ) տրամադրում է ԱՏԱ Կառնետ (ժամանակավոր ներմուծման գրքույկ) հավաստագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: ԱՏԱ Կառնետ հավաստագրերը ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր են, որոնք օգտագործվում են ապրանքների ժամանակավոր ներմուծման համար՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների»:

Հոդված 2. Եզրափակիչ մասն և անցումային դրույթներ ~~ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. ~~**Հոդված 2.**~~ ԱՏԱ Կառնետ հավաստագրերի տրամադրման կարգը սահմանել ~~հաստատել~~ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:

3.

4. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

5.

6. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « «ԱՌԵՒՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-229-07.04.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

7.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր «թ» կետով, որի համաձայն՝ ՀՀ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ԱԱՊ-ն, բացի սույն օրենքով պալատներին վերապահված գործառույթներից, տրամադրում է 1990 թվականի հունիսի 26-ին Ստամբուլում ստորագրված «Ժամանակավոր ներմուծման մասին» կոնվենցիայից բխող ԱՏԱ (ժամանակավոր ներմուծման գրքույկ) Կառնետ հավաստագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»: Այս առումով իրավական որոշակիության սկզբունքի ապահովման նպատակով առաջարկում ենք Օրենքում ամրագրել *«ԱՏԱ Կառնետ հավաստագրեր»* հասկացության *իրավական բովանդակությունը՝ նկատի ունենալով, որ* Օրենքում այդպիսի ձևակերպում առկա չէ: **Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետը առաջարկում ենք շարադրել հետևյալ բովանդակությամբ.** **«թ) տրամադրում է ԱՏԱ Կառնետ (ժամանակավոր ներմուծման գրքույկ) հավաստագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: ԱՏԱ Կառնետ հավաստագրերը ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր են, որոնք օգտագործվում են ապրանքների ժամանակավոր ներմուծման համար՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների»:**		

3.	**ՀՀ կառավարություն**	«Անցումային դրույթներ» հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ 1. 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները: 2. 5-րդ մասի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում է նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: 3. 7-րդ մասի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասը և անցումային դրույթները կարող են շարադրվել առանձին գլուխների կամ հոդվածների կամ կետերի ձևով՝ սույն օրենքով սահմանված կարգով: ***Վերը նշված իրավանորմերի հիման վրա առաջարկում ենք Նախագծի «ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ»-ը, 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթները միավորել՝ դրանք շարադրելով մեկ հոդվածի տեսքով հետևյալ խմբագրությամբ.*** ***«Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ*** ***1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան***	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հաջորդող տասներորդ օրը: *2. ԱՏԱ Կառնեգ հավաստագրերի տրամադրման կարգը սահմանել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:»:*		